

մէ, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ հաստատումներու՝ Վիեննայի մեր եղբայրակիցներէն եւ այլ կեդրոններէ:

Անկեղծ մազթանքներ, ի վերջոյ, ձեր աշխատութիւններուն եւ ուսումնական ծրագիրներուն, մինչ բոլոր սրտով շնորհակալ կ'ըլլանք Հայագիտական այս Հաւաքոյթին կազմակերպիչներուն՝ իրենց ազնիւ գաղափարին համար՝ կնքելու ուսումնական եռօրեան եզրափակիչ այցելութեամբ մը հոս Ս. Ղազարի մէջ, ուր Պայրըն խոկաց եւ ըստեղծագործեց:

Հուսկ կը փափաքեմք մեր ամէնէն սրտագին ողջոյնները ներկայացնել Վենետիկի Ուսումնական Համալսարանի Վարչութեան, յարգարժան վերատեսուչին, Ակադեմական Մարմնին ու համայն մասնակցողներուն, ինչպէս նաեւ մեր սիրելի Դոկտ. Ալպերթոյ Ռիցցիին՝ Քննիչ Վենետիկի Մշակութային եւ Պատմական գոյներուն վերատեսուչութեան՝ իր հմուտ եւ ազնիւ բացատրութիւններուն համար, որոնցմով կենսաւորեց այս հանդիպումը:

Հ. Ն. Տ. Ն.

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՆՈՒԻՐՈՒՍԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ Բ. ՍԻՄՓՈԶԻՈՒՄ

(Երևան, 12-18 Սեպտ. 1978)

Այլեւայլ առիթներով, վերջին տասնամեակներու ընթացքին, բարձր մակարդակի գիտական հանդիպումներու, համաժողովներու, Միմիոդիումներու քաղաքը կոչուած է Երևան:

Հայ Արուեստին Նուիրուած Միջազգային Բ. Գիտաժողովին բացառապէս յաջող իրադրութեամբ, Երևան ոչ միայն արդարացուց իրեն տրուած կոչումը, այլ նաեւ նոր տարածքով մը ճոխացուց զայն՝ հողին նուիրականութեան բոլոր եւ սերտելի իրականութիւններու առկայութեան յուզումը հաղորդելով գիտութեան խօսքին:

Միջազգային ու գիտական մակարդակով ամէն հանդիպումի տրուած չէ, մանաւանդ երբ անոնք հեռւոր անցեալի մըն ալ կը նային, միացնել գիտութեան հմայքը՝ բնավայրին հարազատութեան: Ոչ ալ, անշուշտ, կարեւորութեան պարագային՝ նման սկզբունքի մը կանոնական դարձած կիրարկումը անպայման նախընտրելի պէտք էր համարուի: Բայց նկատեցէք պահ մը՝ թէ ի՞նչ պիտի ըլլար բիւզանդագիտութեան միջազգային համաժողովի մը փայլը՝ նոյնինքն պատմական Բիւզանդիոնի քուրճերուն վրայ, Սրբուհի Սոփիայի մը դմբէթներուն շուքին ներքեւ:

Հայ Արուեստի Միմիոդիումը Երևանի մէջ՝ իր իմաստնային տարողութեան գաղաթնակէտին հասաւ անով որ, գիտական-կադմակերպչական բոլոր նուաճումներէն անդին, գիտաժողովին մասնակցողները կրցան դալ իրենց բնիկ ու հարազատ միջավայրին մէջ այդ արուեստին ստեղծագործութիւնները՝ Գառնիէն Հոփիսիմէ, Գեղարդէն Սանահին, Զուարթնոցէն մինչեւ Ծիծեռնակաբերդ, դաբերու թողած մոխիրով ու արցունքով, յոյգերով եւ յոյսերով:

Գաղափար մը կազմելու համար Գիտաժողովին տարածքներուն եւ զտած ընդունելութեան՝ բաւ է ըսել թէ, պաշտօնական յայտարարին համաձայն, 142 հոգիի կը հասնէր հրաւիրեալներու թիւը արտասահմանի երկիրներէն, որոնցմէ հինգը Սովետական հանրապետութիւն-

կրորդ ենթաբաժնին: Ձեկուցումները տեղի ունեցան Շաբաթ, Սեպտեմբեր 16ի առաւօտեան: Նոյն օրը Փրոֆ. Ս. Մնացականեանէ եւ Փրոֆ. Բիրիլ Աֆանասիեանէ վերջ բեմ բարձրացաւ Փրոֆ. Արիակոյ-Նովելլոյ՝ իբր նիւթ ունենալով «Հիւսիսային Իրանի մէջ Հայ ճարտարապետութեան քիչ ծանօթ կամ անծանօթ յուշարձաններ»: Լուսապատկերային ճոխ վաւերագրումով եւ յատկազօծերու վերլուծումով՝ Փրոֆեսորը ներկայացուց արդիւնքները՝ վերջին տարիներու ընթացքին Միլանոյի Կեդրոնին Վոլմէ դէպի Պարսկաստան կատարուած գիտարշաւներուն, վաղմակերպուած՝ Խտալական եւ Պարսկական Կառավարութիւններուն հովանաւորութեամբ:

Փրոֆ. Արիակոյ-Նովելլոյի իսկոյն յաջորդեց Փրոֆ. Ուլուհո-ճեան, որ մաս կադմած էր յիշեալ գիտարշաւներուն: Օր. Ուլուհո-ճեանի նիւթն էր՝ խնդրոյ առարկայ յուշարձաններու հայերէն արձանագրութիւնները, իրենց յարակից հարցերով: Ձերմ գնահատանքի արժանացաւ հայերէն լեզուով կատարուած այս զեկուցումը Փրոֆ. Ուլուհոճեանի, որ բնիկ Խտալահայ մըն է ու ներկայիս կը վարէ Պոլսի Պետական Համալսարանի հայագիտութեան ընթացքը:

Փրոֆ. Յարութիւն Գաղանճեանի զեկույցը, Կրկրորդ ենթաբաժնին մէջ՝ 13 Սեպտեմբերին, կը դառնար՝ հայ ճարտարապետութեան մէջ եւ յատկապէս Է. դարուն գմբէթներու կառուցման կայնազիտական սկզբունքներուն շուրջ: Յիշենք հոս որ արդոյ Փրոֆեսորը Պերկամոյի Գիտաթողովին շօշափած էր Զուարթնոցի վերակառուցման հարցը, որուն բնագիւղը, Վնդլայնուած՝ մանրագնին ուսումնասիրութեան մը ձեւով՝ լոյս տեսաւ ապա յիշեալ Գիտաթողովի «Գործեր»ու հատորին մէջ: Իր ներկայ ուսումնասիրութեամբ Փրոֆ. Գաղանճեան նկատի կ'առնէր իջխանի եւ Բանայի եկեղեցիները՝ իբրեւ պատրաստութեան փուլեր Զուարթնոցի շինութեան:

Ճրտգտ. Արմէն Մանուկեանի զեկույցին նիւթն էր «Պաշտօններու խորհրդարանութիւնը», ուր բանախօսը վերլուծումի կ'ենթարկէր ուճարանական յատկանիշերէն անդին՝ խաչքարերու ներքին նշանակութիւնը, շեշտելով այս վերջինիս կարեւորութիւնը արուեստի գործին ամբողջական մէկ «ընթերցումին» համար:

Սիմփոզիումին մասնակցող Հաստատութիւններու կարգին էր նաեւ Վենետիկի Միսիթարեան Միաբանութիւնը, Հայ մշակոյթի այս դարաւոր ուստանը՝ Խտալիոյ ափերուն վրայ, որ սերտ գործակցութիւն մը կը մշակէ Միլանոյի Հայ Մշակոյթի Կեդրոնին հետ: Ձայն կը ներկայացնէր Հ. Լեւոն Ձէքիեան՝ Ատենադպիր Ս. Ղազարի Հայկական Ակադեմիային ու Վարիչ Վենետիկի Համալսարանին Հայագիտութեան դասընթացքներուն: Իր նիւթն էր՝ «Նոր ատաղձ Խտալիոյ մէջ Հայերու ներկայութեան մասին»: Ձեկուցումը, որ տեղի ունեցաւ 18 Սեպտ. Երկուշաբթի առաւօտ, մաս կը կազմէր երրորդ

ենթաբաժնին, եւ կը շարունակէր հեղինակին կողմէ Պերկամոյի Գիտաթողովին ներկայացուած նիւթը: Սրահի բազմութեան մէջ կը նշմարուէին մեծամեծ հեղինակաւոր հայագէտ դէմքեր, որոնք բարձր կը բռնեն հայ մշակոյթի եւ արուեստի պատմութեան ջահը՝ իրենց բազմադիւն վաստակով:

Միսիթարեան Միաբանութեան անունով Սիմփոզիումին հրաւիրուած էր նաեւ «Բաղմալէպ»ի խմբագրապետ Հ. Ներսէս Վրդ. Տէր-Ներսէսեան, որ ջլարենալով սակայն այդ օրերուն բացակայիլ Ս. Ղազարէն, պիտի մեկնէր աւելի ուշ՝ ներկայացնելու Միաբանութիւնը Վեհափառի 70ամեակի եւ Կոլոտ Պատրիարքի 300ամեակի հանդէսներուն:

Խտալիոյ մէջ հայագիտական ուրիշ կարեւոր կորիզ մըն է, յատկապէս հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան ուղղութեամբ, Հռոմի «Հայ Ճարտարապետութեան Կեդրոն»ը՝ գլխաւորուած Փրոֆ. Փաոլոյ Գունէոյէ: Այդ Կեդրոնին շուրջ խմբուած է երիտասարդ արժէքաւոր գիտնականներու խումբ մը՝ ինչպէս Թոմմազոյ Պրեչա-Պրաթատոքի, Պրանչեսոյ Կանտոլֆոյ, Մարիոյ Տ'Օնֆրիոյ, Թոմմազոյ Սքալեսսէ: Ասոնց վրայ աւելցնելու է նաեւ ուրիշ վաւեր ու երիցագոյն գիտնականի մը անունը՝ որ է Փրոֆ. Պերնանտա Տէ Մաֆֆէի, որ ներշնչող ոյժերէն եղած է Կեդրոնի առաջին հանգրուաններուն: Թէեւ բոլորն ալ հրաւիրուած պաշտօնապէս՝ Երեւանի մէջ չկրցանք հանդիպել վերջին երկու անուններուն, մինչ Դոկտ. Պրաթատոքի Երեւան եկած էր միայն երկու օրուան համար, խոյս տալով ճարտարապետի իր պաշտօնավարական (professionel) պաշտօններէն, որպէսզի անձամբ կարդար իր զեկուցումը՝ իբր նշան մը Հայ Մշակոյթի հանդէպ իր համակրանքին: Նիւթն էր՝ «Բանի մը անդրադարձութիւններ Կոտեցի եկեղեցիին ճարտարապետութեան մասին»: Դոկտ. Կանտոլֆոյ խօսեցաւ «Հայկական վաղ քրիստոնէական ճարտարապետութեան մէջ յօրինուածք եւ գործածականութիւն» նիւթին շուրջ, մինչ Փրոֆ. Տ'Օնֆրիոյ նկատի կ'առնէր «Ե-Է. դարերու քանի մը հայկական պալատներ»:

Յիշեալ մասնագէտներէն զատ՝ Խտալիայէն հրաւիրուած էին տալաւին հետեւեալ ուսումնասէրները. Փրոֆ. Նինա Գաուսչիչիլի՝ փոխ-Վերատեսուչ Պերկամոյի Համալսարանական Հաստատութեան, որ վճռական դեր կատարած էր Ա. Սիմփոզիումին առթիւ, ապահովելով Համալսարանի շէնքին Սիմփոզիումի աշխատանքներուն տրամադրուիլը, Փրոֆ. Զուլիանոյ Պոքքալի՝ Վենետիկի Համալսարանին Իրանագիտութեան Կաճառէն, որ մաս կազմած էր Վենետիկի Հայագիտական Հանդիպումին Կազմակերպիչ Յանձնախումբին, եւ Դոկտ. Միրիոյ Սալվինի՝ Հռոմի Միկենեան եւ Եգեան-Անատոլեան Մշա-

կոյթներու կաճառէն՝ որ կատարեց նաեւ զեկուցում մը՝ «Ուրարտական ծաւալումը դէպի Արեւելք» բնանիւթով:

Իտալիայէն հրաւիրեալներու կարգին էին՝ իտալահայ զաղովթի երեք կարկառուն ներկայացուցիչներ եւս, Տեարք՝ Օննիկ Մանուկեան, Հրանդ եւ Վաղդէն Բաժապեաններ, որոնք իսկական մեկենասներ են գիտական ու մշակութային բաղմաթիւ ձեռնարկներու:

Հոսկ իտալիայէն Երեւան ժամանած էր այս առիթով՝ յիսուն հոգինոց զբօսաշրջային խումբ մը՝ բաղկացած իտալահայերէ եւ բընիկ իտալացիներէ, կազմակերպութեամբ Միլանոյի Հայկական Կեդրոնին: Խումբին անդամները վարելիութիւնը ունեցան մօտէն հետեւելու Սիմփոզիումի նիստերուն եւ մասնակցեցան այս առթիւ կազմակերպուած շրջապտոյտներուն՝ Հայաստանի զանազան վրդերը:

ԱՅՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ

Սովետական հինգ օտար Հանրապետութիւններէն, բնականաբար, մասնակցողներու առաւելագոյն տոկոսը կը պատկանէր Ռուսական Դաշնակցային Հանրապետութեան, որ կը շրջէր 39 հոգինոց պատուիրակութիւն մը:

Բացի յիշուած անուններէն փութրովսքիի, փոտոպետովայի, Աֆանասիեւի, Պանքի, Իզմայլովայի, յիշենք տակաւին ակնառու դէմքերը՝ Խալիպաշեանի, Քամենսքիի, Քուչնարիովայի, Թրուսթա-նովայի, Հոնիսիմէ Զանիդատեանի (ամուսնացած՝ փութրովսքի) եւլն: Կը բացակայէր, դժբախտաբար, առողջական պատճառներով, Փրոֆ. Անաթոլի Եաքոպսոն, ապրող մեծագոյն անուններէն մէկը՝ հայ ճարտարապետութեան ուսումնասիրութեան:

Վրաստանէն կը ժամանէին տասը հոգի, նախագահութեամբ Փրոֆ. Վախտանգ Պերիճէի: Յիշենք ներկայութիւնը Փրոֆ. Կայիանէ Ալիպեկաշվիլիի, ծանօթ նաեւ եւրոպական հրապարակի վրայ՝ վրացական հին արուեստի մասին իր հրատարակութիւններով:

Ուքրանիայէն վեց, Ալքսանդրովսկի երկու եւ Մոլոտաիայէն մէկ (հայ ծագումով Ա. Թորամանեանը) հրաւիրեալ՝ կը լրացնէին Սովետական երկիրներէ ժամանած պատուիրակութիւններուն թիւը:

Արտասովետական երկիրներու միջեւ, յետ իտալիայի, առաջին տեղը կը գրաւէին Միացեալ Նահանգները: Ճոն Քարսոնէլ, Նինա Կարսոյեան, Ռիչըրտ Յովհաննիսեան, Տիգրան Գուլումեան, Թոմաս Մէթիուս, Աւետիս Սանճեան, երաժիշտ Ալան Յովհաննէս կը կազմէին տիրող դէմքերը ամերիկեան «անձնակազմ»ին: Ֆրանսայէն յիշեցինք արդէն Թիէրի ամուլը եւ Փրոֆ. Վելմանսը: Միւս երկիրներէն նշենք հետեւեալ անունները. Արեւելեան Գերմանիայէն՝ Պատշիւպէտ ամուլը եւ բացի վերոյիշեալ Պ. Պրենթիսէն՝ հայազգիտական

հրատարակութիւններով ծանօթ «Union Verlag» հրատարակչատան վարիչը՝ Հոսպերթ Ֆենսէն, Արեւմտեան Գերմանիայէն՝ Արա Պերքեան եւ Վիլթոր Էյպէրն, Անգլիայէն՝ Չարլզ Պլընի, Տէվիտ Մարշալ Լանկ Էլ երաժիշտ Լորիս Ճոնաւորեան, Աւստրիայէն Պուլհաուզըն ամուլը՝ հրատարակիչները Վիեննայի Միլիթարեան Հայրերու Մանրանկարչական ակադմիան, եւ Ռուսոն Ծախէլ, Ռուսոնիայէն Կրիկորէ Եոնեսքու, Նոն Սաւա Նանու եւ երգիծանկարիչ Ջիք Տամատեան, Հունգարիայէն՝ Էրժեպէթ Չեմեկի-Թոմփոշ, Լիբանանէն՝ Փասքալ Փապուճեան, Եւկոսլաւիայէն՝ Փաւլէ Միլովիչ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաղմաթիւ ու զանազանեալ շրջապտոյտներ կազմակերպուած էին Սիմփոզիումի առիթով՝ պատմական յուշարձաններու այցելութիւններու:

Առաջինը, 12 Սեպտեմբերի կէսօրէն ետք, յատկացուած էր Երեւանի: Շրջագայութիւնը սկսաւ Արուեստի եւ Պատմութեան նորակառոյց թանգարանէն, Լենինի հրապարակին վրայ: Շուրջ ժամուան մը դադարէ ետք այստեղ, կառքերը մեկնեցան դէպի Արին-բերդ բլուրը, որուն շուրջ զարգացած էր Քրիստոսէ ութը դար առաջ ուրարտական իրերունին, Երեւանի նախամայրը, ներկայ քաղաքին հարաւարեւելեան ծայրամասին վրայ: Զանազան լեզուներով առաջնորդներ ընդարձակ տեղեկութիւն տուին կատարուած պեղումներու արդիւններուն եւ տուեալներու մեկնաբանութեան շուրջ:

Ըսենք միջանկեալ որ Երեւան, Սեպտեմբերի այս երկրորդ շաբթուան ընթացքին, լրիւ ամառնային եղանակ կ'ապրէր՝ միջին 30 աստիճանի ջերմութեամբ: Լեռնային չոր տաք մը, սակայն, զգալիօրէն տարբեր՝ միջերկրականեան խոնաւ եւ հեղձուցիչ տաքերէն:

Արեւը սկսած էր իջնել՝ երբ խումբերը մեկնեցան իրերունին, ուղղուելով դէպի Մատենադարան, քաղաքին կեդրոնական զօտիին մէջ: Հոս ալ՝ պատրաստուած առաջնորդներ բացատրութիւններ տուին Մատենադարանի ձեռագրական հաւաքածոյին եւ ցուցադրուած ձեռագիրներու մասին:

Երկրորդ շրջապտոյտը, 13 Սեպտեմբերի կէսօրէն վերջ, կազմակերպուած էր դէպի Էջմիածին ու Սարգարապատ: Ճամբու վրայ յաջորդական կայքերը եղան Զուարթնոցի աւերակները եւ Հոնիսիմէի տաճարը: Էջմիածնի Կաթողիկէին եւ գանձատան այցելութենէն ետք՝ խումբը մեկնեցաւ դէպի Սարգարապատ:

Վերջապտոյտի զգլխիչ տեսարանի մը մէջ, որուն ծիրանի խորքին վրայ, երկինքի մեղմացող կապոյտին եւ դաշտերու ոսկիին ու զըմրովստին միջեւ կը բարձրանար սպիտակ կատարը անգ Մասիսի,

գիւղական տօնահանդէսի մը զուարթ արբեցութիւնը կը սպասէր հիւրերուն: Ամբողջ գիւղը կամ շրջակայ գիւղերն էին ընդառաջ եկեր զանոնք դիմաւորելու համար՝ մեծով ու պզտիկով, գիւղապետով ու դպրոցականներով. մատղաշ տղերքը իրենց «պիոններական» սիրուն տարազներով, ջահել աղջիկներն ու պարմանները՝ հարաերու եւ կըտրիճներու աւանդական գունազեղ հանդերձանքով:

Հազիւ հիւրերը վար իջած կառքերէն՝ ճերմակ ու կարմիր մեխակներու տարափ մը կը տեղար իրենց վրայ, մինչ հայկական պըճըրտուն աչքերով աղջիկ մը ու տղայ մը հաց եւ գինի կը հրամցնէին ափսէի մը մէջ, ըստ գիւղական հնաւանդ ատվորութեան: Կը սկսէր ապա Նայիրիի աղջիկներուն հեղաճկուն պարը, որ թեթեւ ալեակներու պէս կը ծեքծեքէր եթերային անօթութեամբ, ձայներու եւ գոյներու եղական բաղադրութեան մը մէջ: Պարերու մեղմացող կշռոյթին հետ բազմութիւնն ալ հետզհետէ կը բարձրանար դէպի յաղթանակի կամարները՝ որոնց զանգերէն հերոսներու երգը կարծես կը ծաւալէր մարմրող արեւուն վերջին ցոլքերուն հետ:

Հայրենի սահմաններուն վրայ թառած արծիւներուն խօսուն նայուածքներուն տակ բազմութիւնը կը յառաջանար դէպի նորակառոյց թանգարանը հնադարեան եւ միջնադարեան հնոթիւններու, գործ՝ անուանի ճարտարապետ Ռաֆֆի Իսրայէլեանի, որուն շինութիւնը եւ սարքաւորումը դեռ հազիւ աւարտած՝ հանրութեան առաջին բացումը կը կատարուէր: Օրը միջցած էր արդէն՝ երբ հիւրերը դուրս եկան թանգարանէն եւ ուղղութեան դէպի դրկից նորաչէն ճաշարանը, ուր ընթերցին:

Եթէ քիչ մը յամեցանք Սարգարապատի այցելութեան այս նըկարագրութեան վրայ՝ դադափար մը տալու համար էր շրջապտոյտներու ընդհանուր միջոցառման մասին, ուր հիւրերը միշտ առարկայ դարձան տեղացի ժողովուրդին խանդավառ եւ տօնական ցոյցերուն:

14 Սեպտեմբերի յետմիջօրէն սահմանուած էր Գեղարդի եւ Գառնիի այցելութիւններուն, մինչ նոյն օրուան գիշերը ժամը 22.20ին բոլոր հիւրերը Երեւան-Թիֆլիս շոգեկառքով եւ իրենց տրամադրութեամբ մասնաւոր ննջակառքերով կը մեկնէին դէպի Ալավերտի, ուր կը հասնէին յաջորդ առաւօտ ժամը 8ին:

15 Սեպտեմբերի ամբողջ օրը վերապահուած էր հիւսիս-արեւելեան Հայաստանի պատմական յուշարձաններուն այցելութեան, կարգով՝ Հաղբատ, Մանահին, Օձուն, Գոշաւանք, Հաղարծին: Ծաշը կը կատարուէր Օձուն գիւղը, իսկ ընթերցե՛ր՝ Սեւանի ափին «Ախթամար» ճաշարանին մէջ:

Վերջին խմբական այցելութիւնը, 16 Սեպտեմբերի կէսօրէն վերջ, դարձեալ Երեւանի մէջ էր, Հայաստանի տնտեսական իրադրո՞ւմներու ցուցահանդէսին:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵՎՈՅԹՆԵՐ

Սիմփոզիումի յայտագիրը ճոխ էր նաեւ գեղարուեստական երեկոյթներով: Սեպտեմբեր 12ի բացման իրիկունը տեղի կ'ունենար սենեկային երաժշտութեան եւ մեներգներու համերգ մը՝ «Կամերային երաժշտութեան տուն»ին մէջ: Դարձեալ պիտի ապաւինինք ոչ միայն մեր ընթերցողներուն, այլ նաեւ նոյնինքն մեր արժէքաւոր արուեստագէտներուն ներդրամութեան՝ եթէ կարելի պիտի չըլլայ հոս յիշատակել բոլորին անունները իրենց արժանիքներով: Պիտի չկարենանք, սակայն, զանց ընել առաջին բաժնին համար՝ դաշնակահարուհի Սվետլանա Նաւասարդեանի եւ «Հայհամերգ»ի մենակատար երգչուհի Մելանեա Աբովեանի անունները: Առաջինը յատկապէս Խաչատուրեանի «Թոքթաթա»յին, երկրորդը՝ Վասպուրականի եւ այլ ժողովրդական երգերու յաջող կատարումով:

Երկրորդ բաժնին մէջ՝ յուզականօրէն անմոռանալի պահեր ապրեցուց ունկնդիրներուն Լուսինէ Զաքարեան, որ աւելի քան արդարացուց հոգեւոր երգերու բացառիկ մեկնաբանի իր համբաւը՝ առնոց որ միայն լսեր էին իր մասին, խորապէս տպաւորելով մինչեւ իսկ օտար եւ խտլացիներու նման բծախնդիր ունկնդիրներն ալ:

Համերգը աւարտեցաւ Տ. Մանսուրեանի «Կոնցերտ թաւջութակի համար» գործին կատարողութեամբ, ուր նմանապէս երեւան բերաւ իր բովանդակ տաղանդը՝ միջազգային մրցանակաբաշխութեան դափնեկիր՝ մենակատար թաւջութակահարուհի Կարինէ Գէորգեան:

Համերգի աւարտին, բովանդակ բազմութիւնը կը բարձրանար դէպի Եղեռնի յուշարձանը, Ծիծեռնակաբերդ, խորազգած ապրումի առանձնաշնորհալ պահ մը ապրելով՝ ծղրիթներու երգին հետ ինքզինքը լսել տուող գիշերային լուսութեան ու մշտավառ բոցի մը հեւքին հետ աղօթք դարձող քարերու խորհուրդին մէջ:

Գեղարուեստական երկրորդ երեկոյթ մը տեղի կ'ունենար 16 Սեպտեմբեր Շաբաթ իրիկունը՝ Պետական Օփերային մէջ: Առաջին մասը կը բաղկանար ժողովրդական երգերու եւ երաժշտութեան կատարողութիւններէ, ուր հանդէս կու դային ժողովրդական արուեստագէտներ՝ ինչպէս Ֆլորա Մարտիրոսեան, Ռուբէն Մարթեւոսեան եւ ուրիշներ:

Երկրորդ բաժինը յատկացուած էր պարի համոյթին, որ Վանուշ Խանամիրեանի ղեկավարութեան ներքեւ, հոյակապ պարագրութիւններ պարզեց հանդիսատեսներու աչքերուն, ուր շարժումներու բանաստեղծութիւնը, պատկերներու ալլաղանութիւնը կը մրցէին տարազներու փայլին եւ ճոխութեան հետ:

Գեղարուեստական վերջին երեկոյթը, Կիրակի 17 Սեպտեմբերին, հանդէս բերաւ «Հայաստանի Պետական Ակադեմիական Երգչա-

խումբ»ը՝ ղեկավարութեամբ հռչակաւոր խմբավար Յովհաննէս Զէ-
քիջեանի: Եկմալեան, Կոմիտաս, Կանաչեան, Նովիկով, Վերդի,
Կունոյ, Ռոսսինի յաջորդեցին իրարու իրենց ամէնէն յատկանշական
կտորներով՝ կատարողական զիտարուեստի անլիճելի մակարդակի
մը վրայ, որ կը դասէ այս երգչախումբը՝ սովետական ու եւրոպա-
կան չափանիշով լաւագոյն խումբերու կարգին:

ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սիմփոզիումի եզրափակիչ օրն էր Երկուշաբթի 18 Սեպտեմբեր
թուականը: Առաւօտեան սովորական նիստերէն վերջ, յետմիջօրէի
ժամը 15-15ին, Ակադեմիայի բանախօսութիւններու դահլիճին մէջ
կը սկսէր փակման հանդիսաւոր նիստը, խոսնեամբ բաղմութեան
մը ներկայութեան: Պատուոյ ամպլոնը կը դիտարկէր՝ փոխան Նա-
խարարներու Խորհուրդի Նախագահութեան առջին տեղակալ Կի-
րակոսեանի, միեւնոյն Նախագահութեան տեղակալներէն՝ Ռեմա
Սլեթլովա, իր շուրջն ունենալով ակադեմական եւ պետական հեղի-
նակութիւնները:

Նիստը բացուեցաւ Փրոֆ. Վարդգէս Յարութիւնեանի ղեկու-
ցումով՝ «Միջնադարեան հայ ճարտարապետութեան զարգացման շա-
րունակականութիւնը» նիւթին շուրջ: Յաջորդեց Ժ.-Մ. Թիէրիի ղե-
կուցումը «Կարսի Ս. Առաքելոց Մայր տաճարին քանդակազարդերը»
խորագրով:

Այս երկու եզրափակիչ ղեկուցումներէն ետք՝ բեմ բարձրացան
յաջորդաբար Ա. Քամենսքի, Պ. Պրենթիէս եւ Ա. Ալիակոյ-Նովելլոյ՝
իբր ներկայացուցիչներ զանազան աշխարհներէ Սիմփոզիումին մաս-
նակցող հասարակութեան, որոնք յայտնեցին իրենց տպաւորութիւն-
ները Սիմփոզիումի մասին, դրուատեցին Հայ արուեստին զարգա-
ցումի բարձր մակարդակը եւ նշանակալից դերը Համաշխարհային
արուեստի ընդհանուր շրջափրին մէջ, անդրադարձան հայ արուես-
տի ուսումնասիրութեան եւ՝ ծաւալման ուղղութեամբ տարուած աշ-
խատանքներուն, եւ փակեցին իրենց խօսքը շնորհակալութեան եւ
շնորհաւորութեան ջերմ արտայայտութիւններով Սիմփոզիումի Կազ-
մակերպիչներուն հանդէպ եւ նման ձեռնարկներու շարունակականու-
թեան վառ իղձերով:

Տպաւորիչ էր լսել այս «օտար» ձայները, որոնք կը թրթռային
խանդավառութեան հետ մրցող յուզականութեամբ մը, որով խօսքը
թափանցիկ կը դառնար՝ ինքնարուխ անմիջականութեան մը անկեղ-
ծութիւնը հաղորդելով՝ լեզուին պայմանական նշաններէն անդին:

Եզրափակիչ այս նիստը կ'աւարտէր Փրոֆ. Ռ. Զարեանի խօս-
քով, որ կը շեշտէր ի միջի այլոց Հայ Արուեստին ինքնատպութեան

շնորհը, որով՝ ստացուած ազդեցութիւններու բովին մէջէն՝ որոնց
ենթարկուած է արուեստի ամէն երեւոյթ, ինքնատիպ կամ ոչ, հայ
արուեստագէտը երեւան բերած է նոր եւ ինքնուրոյն համադրութիւն
մը՝ հարազատութեան եւ վաւերականութեան կրկնակ դրոշմներով:
Հոսակ Փրոֆ. Զարեան կը յիշէր մասնաւորապէս Միլանոյի ուսում-
նասէրները եւ զաղութը՝ իբր ռահվիրաները Սիմփոզիումի ձեռնար-
կին, զնահատական զգայուն շեշտերով:

Սիմփոզիումին վերջին հանդիսաւոր հաւաքոյթը եղաւ «Անի հիւ-
րանոց»ին մէջ սարքուած ողջերթի շքեղ սեղանին շուրջ:

18 Սեպտեմբերի դիշերուան անհետացող վերջին բոպէները պատ-
մութեան կը խառնէին, բայց «պատմականութեան» կնիքը դրոշմե-
լով արդէն, 1978ի Երեւանին այս աննախընթաց շաբաթը:

Հ. ԼԵՒՈՆ ԶԷՔԻՆԱՆ